Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յոկտեմբերի 28-ին. Թիֆլիս. №48.

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ



Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ.

—Սամսոն. Է, էս ամէնքն էլ կատարեցին իրենց յօբէլեանները, բա մերը երբ պէտք է կատարենք։
—Կոստեա, ինչեր ես ասում դու էլ, ինչու համար կատարենք յօբելեաններ։
—Էնենց, ոչինչ... բայց գոնէ փող կը հաւաքւի, թէ կուլտուրականի և թէ բարեգործականի համար.
—Լաւ ես ասում, գիտե՞ս. համա էդ խելքը էդ գոգրիցը դուրս եկաւ, կեցցես. ես ու իմ արևը։
—Սամսոն ջան, ես գիտես թէ ինչ պլաններ ունեմ, էն մէկէլներն էլ յետոյ կասեմ։



ԴԻՕԳԷՆԸ ՏԱԿԱՌԻՑ

—Լաւ է, որ ես Գոլստամը չեմ, թէչէ էս թերթերը ինձ էլ կը կեղտոտէին.

## ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

## Բժիշկ Ումիկեան




*Միաժամանակ զանգահարում է՝ ամեն տեղ*

*—Ինչ կը ցանկանաք, պարոն բժիշկ․*

*—Ասացէք խնդրեմ, գիմնազիայում, կամ մի այլ հիմնարկութեան մէջ, բժշկի պաշտօնատեղ չկա՞յ, ես գիտէ՞ք, համարեա բոլոր դպրոցներումն էլ պաշտօն ունիմ. եթէ ձեզ մօտ էլ տեղ կայ, ես պատրաստ եմ։*

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910

5 ՏԱՐԻ **ԽԱԹԱԲԱԼԱ** 5 ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարուելու, քննադատուելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդուեալ ընթերցողները ԱԶԱՏՈՎԱԳՐՒԱԾ են ամէն տեսակ պատուհասներից և խայտառակութիւններից։

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Սերգէևսկայա փող. № 1

Տան եղբ. Միրզոյեանների վերի յարկում

Ցայտաբարութիւններ ամէն լեզուներով և խիստ մատչելի գներով։

Մեր ընթերցողներին ման ենք ածում սեփական աէրօպլաններով։

Բազմաշխատ գործակալներին և «Խաթաբալայի» պրօպագանդիստ տարածողներին «Խաթաբալան» ուղարկւում ենք ձրի։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը | 5 ր. |
| Կէս տարուանը . . . . | 2 ր. | . . . | 3 ր. |
| Երեք ամսուանը . . . | 1 ր. 50 կ. | | |
| Ամիսը . . . . . . . . . . | 50 կ. | | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.

Խմբ. հրատարակիչ՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐԻԱՑ ՎԵՐՋԸ «ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԱՐԺԷ 1 ՌՈՒԲԼԻ։

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

I

Խաթաբալիստներ բոլոր երկրների, միացէք և մեր թերթերին բաժանորդ գրուեցէք !!!

Այսօր երկրորդ շաբաթն է, ինչ հինգերորդ տարուայ բաժանորդագրութիւն ենք բացել և ամէն կողմից բաժանորդների կարծես հեղեղը թափւում է մեր խմբագրատուն։

Այս բանը ի նկատի ունենալով կարգադրեցինք մի անգամ ևս յիշեցնել մեր կուսակիցներին, պատուիրելով շտապել, կարելոյն չափ շուտով բաժանորդագրուել՝ այլև տարածել «Խաթաբալան» իրենց շրջաններում, որովհետև մենք տպելու ենք «Խաթաբալան» որոշ քանակութեամբ և կարող է պատահել, որ շատերին №№ չը հասնի, եթէ բաժանորդների թիւը 25,000000 ի հասնելու լինի։

II

«Խաթաբալայական Դիւանը», ամենախոնարհաբար պատուիրում է իր բոլոր Գեներալ-ագենտներին, այս տարուայ նիսխա բաժանորդներին, անպարտաճանաչ գործակալներին և այլն և այլն և այլն.

Որպէսզի շտապեն հաշիւները մաքրեն, որ Նոր-Տարուն պարզ երես երևան։

## ՓՍԱԿԻԵԼՈՒ ՂԱՑԴԷՆ

Մէ մէ գամ օրմին վուր տառւմ էր, թէ գազէթներում խանգիսիան, կօսէ, լաւ լաւ բանիր էլ կայ, կօսէ, փեչատած, չէի ուտում. տառւմ էի՝ էն թաւուր ինչ կուլի, վուր ինչս չը գիդենամ, համա դուրթ ասիմ ու վուչ ամանչիմ, էս վիրջին շաբթում, «Մշակի» № 261-ում, հեստի մէ լաւ բան կեր գրած, վուր անտիկա, խիստ հաւնիլաւ։ Էս նումերի վիրջին էրեսում մէ հայ դոխտուր, ինքն էլ եարամնէրիւ տարեկան ու ղուլուղն էլ Ռուսէթումն, լաւ ամեղող սաւացող, շատերի գազէ փառքի. մէ իրա ոտնգի լաւ հայ օրհորդի, տն ապրան ախիտաց՞ ինք, վար մէ քիչ էլ փողատր լի ու բանտիկիրից մնշիլի բաան ու օխտը տարեկան, էլ ասել չլի. խնթրում է մարթու գնալ ազգիերուն ինչնց փաթրեֆիկի դրգին, ասավիլէն էլ ինչ, արէրտ Րիբինսկ, դօ վօստրեբնի Փ. Մ. Բէլովին դոխտուրի համա։

Ու թէկի կու ոտնի ու ասօվինէն էլ մեռ կումպայ, խօ ջուղաբ էլ կտայ, թէ բանը գլուխ չէկաւ, փաթթրէֆինիրը յիտ կու դրգի ու ինքն էլ սուս կու կենայ, օչովին բան չի ասի ու փաթթրէթ դրգողն էլ սուս կու մնայ ու կու մնա՛յ, էն զաղերի ղալլի։

Իս ու իմ Աստուծը, շատ լաւ է փիքր արի, ու ասլի շատ, տակաւէր էլէ էլի ու Ռուսէթումն էլ ուզեցել է վուր հայ կնուչ հիդ փսակուի, համ էլ մօցիքուլնիրու հէրն է անիծի ու էժան է պրծի, համ էլ Սունդուկովենց Գաբրիէլի նուր գրած թրխտաղի պիէս «Սէր կամ ազատութիւնին» էրկու վեղրատար ջուր է վրէն ածի։

Ա՛յ, դուրթ վուր խելօք մարթ, ուզաւոր գօխտուր, օրինաւոր հայ, զայրաթով տակաւէր։

Աստուծ մուրազին արժան անի, լաւ է փիքր արի։

Տեհէք թի ինչ թաւուր օրինաւոր մարթ է, վուր ռուսէթումն էլ, վուրդի սիրուն սիրուն աղչկիրքը տառը մէ շայի է, կտափ խիարի համդը ու էն էլ վո՞նց, մաքքրափ թաւուրնիր, վուրդի ուրիի ախչկիրքը, նեմկէքն ու պօլկէքը մարթու էրեւ գիվիր ին դզլում, էս միր դօխտուրը ցօցխալութին չէ արի, վո՞նց հայ եղափուխական է դառի, վուր եաղ ասկի ախչկայ հիդ փսակէի ու ուրիշ լիզւով խօսող էրեխայ ունենայ. էլի սիրար միր ախչկերանց համա է պահի։

Հաաց աղչկի՛ր, ծիր հօրան մ՚եռնիմ,
Խիի մ՚իտա իր զուշ, աստծ իմ՚ իս վա՛խ

Աստուծ գիդենայ, վուր ասիմ թէ սա մինձ բան է, համաք չը գիդենաք։

Տօ՛ անամօթ հայ ջհելնիր, բաս դուք ի՞ք Հայաստանի համա փիքր անողնիրը, ա՞ն տակաւէրնի՞րը, վուր վուչ փսակւում իք, չունքի համադնի գրամգանինի հանդը տրանդի իք տալի, թէ խարջը շատ կուլի ու օրինաւոր պարա չիք կարում գթնի, ա՞ն թէ վիրջը փսակւում իք, վիր իք կալնում հեսափ նամուսաւուր եաղ ասկի ախչկերքիցը, վուր սաւայ ձեռնից, հարիր օխտանա-

սուն ուրիշ մարթիք էլ է ունեցի, էս ջէր քիչ՝ ու միրչն էլ էն իք ասում թէ՝ սիրահարւեցանք, կօսէ, ու սէրը զարափաթ չէ, կօսէ։

Զարափաթ չէ մա՞շ, զարափաթ չէ։ Իս մուր ախչիկ ըլէի ու էն էլ հայ ախչիկ, իմ հօքին գիդենայ, էս թաւուր զոխուրի համա, փաթրէթ կի չէ, ինքս մուտով կու մագէի անդնջում. ու էս թաւուր ադէն, մաշ հայալ չէ՞, մուր մէ դուժին լաւ լաւ ախչկերք էլա չուգի՞։

Իս դրա զարդիմանը հօրուն մեռնիմ։

Սանդուկովենց Գաբրիէլը իր նուր պիէսում ասում է՝ «թէ սէր չըկայ՝ փասկ չի ըլի», կօսէ. անդադէք է. էս սահաթիս մէ իրեք դուժին հարուստ ախչկերք մուր ըլին, իս էլ կու փասկւիմ, թէկի ամեն մէկը քսասուն քսասուն հազար թումնի կուտան, մէ իրենց համա «սակութար» սպահմութին կանենան։

Ու կու փասկւիմ սակաֆրաքար, սաղի խաթրու։ Սէրս մ՞ուրս է, մածունս մուրը, էստի թան ու կարաք խօ չինք շինում, մուր սէրի մրեն էլ փիքր անինք։ Ան ծմ է էն կնիկը, մուր հիմի մարթուն սէրի համա է ուզում, ան քանի մարթ կա՛յ, մուր կնգան մունց մուր մարթ է մտիկ տալի։

Համա «Մշակի» № 261ի զոխուրը կի՝ սաղի համա է փասկւում։ Ու թէ գիդենայ, թէ միր ախչկերքն էլ պակաս արարմունքի տէր չին, քանց թէ ռուսի, ուրիի, նէմկի ու պօլկի ախչկերը ծմ գիդի. էլի կու փասկւի՞։

Աւսաս, մուր չէ։

Ինչի՞։

Միգեգնիրը գիփ չիմ ասում, համա հիմիկւայ լուսաւորութինը, ցօցիալութինը պարեգզներում, բալերում ու գուլանէքում, քուչէքում ու դաչէքում, խիստ ին կըթում, ու անվախտ բաղտաւուրացնում միր աղչկերքանց։

Էս կըթութէնի համա էլ դուզէ մուր բան իմանայ միր զոխուրը։

Սաւայի սրանէն, շունրի միր ախչկերքը, տղերքը ու պարուն կէկէնիրը մօցիրուլներիցը փախչում ին ու իրենք էլ մէկմէկու ամեն բան ասում ին, սիրտը ուզած տեղ թաքուն գնում ին ու պաչպչելով լուսնին ամանչացնում ին, էստուր էղնէն Է՞լ, իս հանում իմ էս դայդէն էլ, դադէթներում մէկմէկու այդնիլն ու արիւլէներով փասկւիլը։

Ինչ մուր չիս կանայ սաւ լիգւով, գրիշ ու մէլանով, ներկ ու հանարքով, կուլի մուր սաւի։ Ու լաւ կուլի, մուր էստուր եղնէն, լաւ հայ տղայ ու ախչիկ, իրար ուփրօ շուտ ու հիշտ գըթնին, քան տղերքը ուրիշ ախչկերք ուզին ու ախչկերքն էլ փթած կոմշու հանգը տանը նստին։

Գասպար Կալաշովեան

---

## ՄՕԴԱՅԻՆ ՋԱՆԳԻԻԼՈԻՄ

Խարհուրդ ունիմ իմ սրտում,
Բայց քեզ ոչինչ չեմ ասում.
Արի ծածկեմ շլեապիս տակ.
Էլ մի ասի «չեմ ուզում»։

Հաւլարտըդ շատ խիտ ա,
Բօրդօ տօկը գլխիդ ա.
Ուզում եմ ձեռդ պաչեմ,
Ձեռնոցներդ հագիդ ա։

Րեզինկիւս կաշի ա,
Սէրդօղ մեզ մօտ ճաշի ա.
Աղջի, գլխիդ ճարը տես,
Փեսէդ Ալֆօնսրաշի ա։

Գօգերաւոր մարդ ունեմ.
Քեզ շատ սակլիք ունեմ.
Գօգերը դու ես գրել.
Սրած բեխերդ ուտեմ։

Մենք նստել ենք տրամւայում,
Դու ինձ աչքով ես անում.
Հագեհանս կէտիս ա,
Խալխից էլ չես ամաչում։

Տարի ա քեզ թագել եմ,
Սրտումս քեզ պահել եմ։
Դէկադէնտի մինէտդ
Էս օր չկաֆից հանել եմ։

Էլէքտրական ֆանարը—
Գաշեմ յոնքից կամարը.
Թէ ուզում ես ինձ կախեմ.
Տուր բէզինից քամարը։

Աւտոմօբիլից ակը—
Ընկնեմ հէնց նրա տակը.
Գլաշշից մէջը փաթաթած
Բերես մնած ձեր բակը։

Ցիցիանովի ճամբին եմ,
Էկել եմ քեզ պատահեմ,
Աչքս Յունիկուլեօրին...
Իմ դարդս ումը պատմեմ...

Ես ու դու աւիատօր,
Բաղէի պէս թեւաւոր.
Նստել ենք աէրօպլան,
Դու իմ սրտի թագաւոր։

Գէօ-Ղէօ

---

## ԱՆՇԱՀԱՍԷՐ ԻՂՁԵՐ

Ով է
1000 ր. կտամ, թաք իմ յօբէլեանն էլ կատարեն։

—

«Հովւի» խմբագիր ակըսէլը։
10 մանէթ սրտի գոհունակութեամբ կը տամ, ով ինձ կապահովացնէ, որ կապրեմ մինչև տիկ. Դարիա Մանթաշեանի տարելիցին։

—

Փօթիի եկեղեցաշինող Ապրիլեանը։
100 մանէթ կը տամ, ով իմ շինած եկեղեցու 3000 մանէթանոց ծածկը կաւարտէ։

—

Գ. Խաժակը.
Խօսք եմ տալիս, ինձ օգնական ընտրել նրան՝ ով կյաջողեցնէ Բամոյեանց եկեղեցուն երեցփոխ դառնալու։

---

## ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

—Ի՞նչ, էս անից դեռ չէք փոխադրւում։
—Չէ, չենք էլ մտածում։
—Իսկ տանտէրը ի՞նչ է ասում։
—Ոչինչ, ի՞նչ պիտի ասի։
—Բայց դա ինչ յիմարութիւն է, ուրեմն դուք տան վարձը տալիս Է՞ք։
—Ի հարկէ։
—Ուրեմն էլ ինչ անտեաներ էք, ինչ հարկաւոր Է տան վարձ տալ, ապրեցէք մի քանի ամիս, տանտիրոջն ասացէք թէ էսօր կամ վաղը կը տանք. երբ արդէն այդ էլ չի օգնիլ, նա կը դիմի դատարան. դատարանը երեք չորս ամսից յետոյ գործը կը նշանակի, յետոյ ձեր բացակայութեամբ վճիռ կը տայ, դուք պաշտպանւած պատասխան կը տաք. յետոյ նա՝ տանտէրը կատարողական թերթ կը ստանայ. մինչ նա կը տայ դատաստանական պրիստաւին, մի երեք ամիս կանցնի։ Պրիստաւը ձեզ այդ բանը կը հաղորդի, ժամանակ նշանակելով—իսկ այդ դէպքում, մօտ մի տարի անցնելուց յետոյ, կարելի է անից փոխադրւել և մի ուրիշ տուն վարձել։
—Քիչ քիչ տարեկան 300—400 րուբլի այստեղ վաստակ կունենաք։

—

## ԱՆԳՈՐԾՆԵՐԻՑ ՄԷԿԸ

—Այդ մարդը ի՞նչ պարապմունքի տէր է։
—Ոչ մի գործ չունէր, հիմայ հրաւիրել եմ մեզ մօտ՝ կնոջս զբաղեցնի, թատրոն և այլ զւարճալի տեղեր տանի, որպէսզի ես էլ կարողանամ, թուղթ խաղալու ժամանակ, անխռով ու հանգիստ լինել։

—

## ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

—Իսկ ես կարծում էի, որ նա ինձ հաւատարիմ է և չէի տեսնում։
—Լաւ է որ կարծում էիր և չէիր տեսնում...

—

## ԵՐԱԺՇՏԱՍԷՐ

—Օրիորդ, այդ ի՞նչ էք նւագում։
—Լիստի հեղինակութիւն՝ օպուս 69։
—Մի՞թէ. իսկ ես կարծում էի թագման մարշ էք նւագում.

# ԹԱՏՐՈՆ ԵՒ ԳԵՂԱՐՒԵՍՏ

Հայ գերասանական Նոր-Դրամա ընկերութիւնը Հաւլաբարի թատրոնում Ամօ-Խարազեանի ռէժիսօրութեամբ ներկայացրեց Սոֆոկլի «Էդիպ-Արքայ» ողբերգութիւնը։

Թատրոնը ամբողջովին լիքն էր և մեծ հետաքրքրութեամբ սպասում էր վարագուրի բարձրանալուն, որը նշանակուած ժամից միայն կէս ժամ ուշացաւ։

Ընկերութիւնը ամեն ջանք գործ էր դրել այդ երեկոյ լաւ տպաւորութեամբ արձակել իրենց յաճախորդներին, և խաղը անցաւ տաք, որովհետև թատրոնի դահլիճը շատ էին տաքացրել։

Բաւական չէր, որ ուշ սկսեցին, բեմ է դուրս գալիս «Հովիւ» շաբաթաթերթի դեպուտատ պարոն Յովհաննէս Մալխասեանը և սկսում է դատախօսել թատրոնի նշանակութեան մասին։

«Սիրելի հանդիսականներ,—սկսում է նա, թատրոնը ուսումնարանից էլ լաւ բան է, թատրոնը մի եկեղեցի է, որ ամեն մի չաթուրեան իրաւունք ունի մտնելու. ուրեմն դուք սիրելիք, թատրոնում պէտք է շատ լուրջ պահէք ձեզ, ժամանակին ներս գաք և ուրիշի տեղերը չգրաւէք, խաղի ժամանակ չի կարելի ծափահարել, որովհետև առանց այդ էլ շշկլած դերակատարները աւելի շշկլում են, մանաւանդ հազը սատանի խանգարում է խաղին. ուրեմն սիրելի հանդիսականներ, խնդրում եմ թատրոն գալու օրը ձէթով կերակուր չուտէք և լաւ կը լինի այդ երեկոյ մի մի հատ թերխաշ ձու կուլ տաք, ինչպէս ես եմ անում, էլ չէք հազալ։ Ես եղել եմ Մոսկուայի Խուդօժեստուեննի թատրոնում. գիտէք ինչպէս է այնտեղ. ճ... մի օր ընկերս մի րոպէ ուշացաւ և նրան ներս չթողին, բացի դրանից, այնտեղ խօսել արգելուած է տեղից տեղ փոխել, օրինակ՝ ինչպէս ես այստեղ լօժայից լօժա եմ թռչում, այնտեղ չի կարելի այդ բանը անել։

Պարոնը չաւարտած իր դատախօսութիւնը հանդիսականներից մէկը ձայն չխնդրեց և բարձրաձայն սկսեց քարոզել։

—Այո, պարոններ, թերխաշ ձու կուլ տալը անհրաժեշտ է թատրոն գալիս, որովհետև երբ մենք թքում ենք, մեր թուքը թղթի հետ խառնելով գոլորշիանում է և օդը լցնում է բացիլներով. Ֆիզիկայի օրէնքից մենք գիտենք, որ թուքը դէպի վեր է բարձրանում, ուրեմն այդ թուքը բարձրանում է բեմ, որը մեր խեղճ դերասանները կուլ տալով թոքախտ են ընկնում և այդ է պատճառը, որ մեր դերասանները բոլորն էլ մեռնում են թոքախտից։

Երկուսի դատախօսութիւնն էլ շատ հաւանեցին հանդիսականները և խոստացան հետևեալ ներկայացման դահլիճ ներս գալուն պէս՝ մէկ մէկ թերխաշ ձու կուլ տալ։

**Բախօ**

## ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Միայն Աստուած է անսխալ,—ասում է որբերի հոգաբարձուն հինգ հազարը գրպանելով։

—

Սիրում ես զարմանալ, սիրիր եւ ծախսը հոգալ,—ասում է տատմայրը, հէնց որ նորածնունդ եօթներորդ աղջկան տալիս է հօր գիրկը։

—

Սիրոյ առաջ բոլոր դռներն էլ խոնարհում են,—ասում է բաւթար ծերունին, երբ մի քիչ գեղեցկադէմ աղախին հանդիպում է նախասենեակում կամ այլուր...

Մի ունենայ փող եւ տաղանդ, այլ ունեցիր հարուստ երկրպագու.—ասում է դերասանուհին, եթէ մի քիչ աչքի լոյս ունի,

## ՍԱՏԱՆԻՆ ԹԱՐՍ ՆԱՒՈՂԸ

Մի մարդ ճանապարհ էր գնում։ Երբ նա անցնում էր մի ընդարձակ դաշտով, ուր ոչ ծառ, ոչ քարայր և ոչ մի պատսպարուելու տեղ կար՝ սկսեց սաստիկ անձրև տեղալ։ Մարդը անձրևից պաշտպանուելու լաւ միջոց գտաւ, գործածեց և չթրջուեց ու շարունակեց իր ճանապարհը։

Այդ ժամանակ պատահեց դրան սատանան, որը այնպէս էր թրջուել անձրևից, որ ջուրը վրայից ծծլում էր։ Սատանան զարմացած կանգնեց և նայում էր մարդուն։

—Այ մարդ, ասաց նա, այս ինչ է նշանակում. ես սատանայ տեղովս այսպէս թրջուել եմ, իսկ դու այդպէս չոր, ցամաք, կարծես քեզ վրայ անձրև չի եկել. ասա—ինչի՞ցն է այդ, որտեղ էիր պատսպարուել։

—Այո, ճիշտ է, որ ես ցամաք եմ, իսկ դու թաց, ես ոչ մի տեղ չեմ պատսպարուել և եղել եմ անձրևի տակ, ինչպէս և դու, իսկ թէ ինչու չեմ թրջուել, այդ ուրիշ բան է. Կուզե՞ս սովորեցնեմ անձրևի տակ մնալու և չթրջուելու հնարը։

—Սովորեցրու։

—Կսովորեցնեմ, միայն պէտք է վճարես։

—Ո՞րքան ես պահանջում, հարցրեց սատանան։

—Ես փող չեմ վերցնիլ, ասաց մարդը։

—Հապա ի՞նչ։

—Եթէ թոյլ կտաս, որ քեզ թարս նայեմ, այն ժամանակ կսովորեցնեմ, թէ ինչպէս կարելի է անձրևի տակ մնալ, բայց չթրջուել։

—Գրողը տանի, ասաց սատանան, ինչի՞դ է պէտք ինձ նայելը, քեզ ինչ օգուտ դրանից. փող որքան կուզես տամ, միայն ցանկացիր, դէ՛հ...

—Ուրիշ բան չէ հարկաւոր ինձ, իմ պայմանը այդ է, ուզո՞ւմ ես, լաւ, կսովորեցնեմ, ոչ, կգնամ։

Սատանան մտածմունքի մէջ ընկաւ, նա ուզում էր սովորել չթրջուելու միջոցը, բայց վճարը թանգ էր։

—Հ՞ը ինչ վճռեցիր, ես գնում եմ, ասեց մարդը.

—Լաւ, ես համաձայն եմ, ասա տեսնեմ ո՞րն է քո իմացած միջոցը։

—Չես կարող խաբել, ասեց մարդը, նախ պէտք է նայեմ, ապա ասեմ։

Շատ դժւարութեամբ համաձայնեց սատանան նայել մի հասարակ մահկանացուից։ Երբ գործը վերջացած էր՝ մարդն ասեց.

—Դէ լսիր, յիմար սատանայ, ինչպէս է որ այնպիսի մի չնչին միջոցը չես կարողացել ինքդ հնարել։ Երբ անձրև է սկսում գալ, տես, թէ ես ինչ եմ անում չթրջուելու համար։ Հանում եմ բոլոր շորերս, փաթաթում, մի կապոց դարձնում, դնում եմ մի քարի վրայ ու վրան նստում, թող գայ անձրևը, որքան կամենայ, ես միայն լողանում եմ, իսկ երբ դադարում է անձրևը, հագնում եմ իմ չոր մնացած շորերը։ Ինչպէս ես հաւանում, գրող։

—Ա՜խ, դու գրողի բաժին, ասեց սատանան, ձեռքի ափով շպպացնելով ճակատին, ինչ հասարակ բան, բայց ինչ թանգ վճար։

Նրանք շարունակեցին իրենց ճանապարհը։

Անցաւ մի քանի ժամանակ, յիշեալ մարդը մեռաւ և չգիտեմ ո՛ր մեղքերի համար տարուեցաւ դժոխք։ Սատանաները նրան սիրով ընդունեցին։ Նա չէր մոռացել իւր նախկին ծանօթին, որին չէր տեսնում այդտեղ. սակայն, մէկ էլ յանկարծ ներս մտաւ յիշեալ սատանան և տեսնելով մարդուն աղաղակեց.

—Ընկերներ, այդ մարդուն այստեղից վռնդեցէք, եթէ ոչ նա բոլորիդ էլ թարս կը նայի, դա նա է, որի մասին պատմեցի։ Օ՜... դա ամենից էլ սատանայ է։

Ընկերի խօսքը յարգեցին սատանաները, ժողով գումարեցին և վճռեցին, որ մարդուն դժոխքից արտաքսեն։ Այդպէս էլ արին, իսկ մարդը այնտեղից վռնդուելով՝ գնաց դրախտ, ուր դուք էլ կուզէիք գնալ։

**Ցով-Մար**

## ՈՍՏԻԿԱՆԱՏԱՆԸ

Ոստիկանատուն մտաւ մի կոկիկ հագնուած պարոն և ուղղակի դիմեց այս խընդրով.

—Պարոն պրիստաւ, այս րոպէին մի պարոն յափշտակեց կնոջս...

—Հանգստացէք խնդրեմ, այս րոպէիս կը կարգադրեմ նրան ձերբակալել և տիկնոջդ ձեզ կը յանձնենք։

—Ոչ, ոչ, խնդրում եմ այդպիսի բան չանէք։

—Ինչպէ՞ս։

—Խնդրում եմ այդ փախցնող պարոնին յայտնէք, որ երբ կնոջս յագենայ, այլևս ինձ մօտ չը բերէ։



### ԲԺՇԿԻ ՄՕՏ

—Պարոն բժիշկ, խնդրեմ ասած՝ ինքս էլ չեմ իմանում, թէ ինչս է ցաւում, ոչինչ չեմ զգում, բայց ձեռքերս յոգնած են, կարծես թէ... շատ եմ գործում։

—Դուք հօ կապալառու ինժէնէր, կամ եկեղեցու երեցփոխ չէ՞ք.—Այդ դէպքում հրաժարուեցէք այդ պաշտօններից. որովհետև գողութեան հետևանքն է այդ։

—

### ՕՏԱՐՈՏԻ Է

—Զարմանալի մարդ ես. ուրիշները ինձ համար ուղղակի գժւում են, իսկ դու իսկի չես էլ հաւանում։

—Որովհետև ինձ պէս մօտիկ, քեզ դեռ ոչ ոք չէ ճանաչում։

—Սխալւում ես...

—

### ԳԱՆՁ Է

—Պարոն Մինաս, ձեր կինը ուղղակի գանձ է և ոչ թէ կին։

—Ի՞նչպէս։

—Ի հարկէ, եղբայր, նոյնիսկ ինքն է իր շորերը կարում։ Դա անտեսութիւն է։ Կար անողները գիտէ՞ք թէ կլպում են։ Իսկ այդ բան արժէ՞ թէ չէ։

—Ի հարկէ արժէ, և աւ՛ելի թանգ, քան թէ կարելի է երևակայել։ Կինս մինչև մի օրինաւոր բան կը կարէ, տասը կտոր կփչացընէ ու գէն կը ձգէ. այդ պարագաներում, ինձ թւում է, որ աւելի արժէ։

### ԱԼԲՕՄԻՑ

Աշնան տերևը անուրեկ, գունատ
Սրնթաց քամուց պոկւում է ծառից.
Քո հրապոյրներն էլ ամենը հատ-հատ
Տրորւում ֆլիրտի մանրերը չոչից...

Շքեղ կանաչով ծառը այն՝ նորից
Վառառն ու հպարտ ժպտում է գարնան.
Խեղճ թևացորդըդ որ ծածկես մեզնից՝
Պիտի չալակես ողջ «բարւանարան»...

Դէօ-Դլօ

---

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

*Բաքու.* Մարիամ Վարդապարիկեանին.—Զարժէ տպել Ձեր «Աշնանային սպասում էի» գրւածիկը, նրա համար միայն՝ որ վերջը դուք էլ նոր նոր՝ ձորի խորքերն էր ուղևորվել. եթէ էլի գրէք, գուցէ նրանց մէջ տպելու բաներ կը լինեն, միայն ի սէր Աստծոյ, ձոր, ծով, գետ, հրգէն և այլն,, որոնց մասին բան չը գրէք։

*Պոլիս.* Հասցեներին.—Մենք ձեզ «Խաթաբալա» չենք ուղարկում, շատ յարգելի պատճառներով, որովհետև ամենքդ էլ քէլէխ ուտողներ էք։

*Երևան.* Օրիորդ Ֆիդօյին.—Դուք մեզ սխալմունքների մէջ էք գցել. ինչպէս տեսանք՝ Եւան խարից...

### ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ԱՂՔԱՏԸ

Մի օր փողոցով շատ անցնելիս,
Տեսայ երկու մարդ դրօյց անելիս.
Մինը հագած էր մաքուր ու կոկիկ,
Միւսը կիսամերկ ու ոտաբոբիկ.
Երբ նրանց տեսայ տեղումս մեխւեցի,
Այս ինչ են խօսում, ինձ ու ինձ ասի.
Չէ՞ որ կուշտն երբ որ մերկին հետ խօսի,
Հետաքրքիր է, մարդ պիտի լսի։
—Աղայ, կանչում էր աղքատը անբախտ,
Չկայ աշխարհում ինձանից քաղցած.
Վիշտը հոգուցս է խեղճ բնակարանս,
Պարտքս էլ հասել է մինչև շլինքս։
Շատ որ ամօթից ես տուն չեմ գնում,
Այլ թափառում եմ, անվերջ թափառում,
Ախ, դատարկ ձեռքով ինչպէս տուն գնամ,
Կամ պարտատիրոջս ինչպէս երևամ։
Խնդրում եմ աղայ, արա հարց ու փորձ,
Եթէ արժան եմ, տուր դու ինձ մի գործ.
Ինչքան էլ փարձ տաս, ես գոհ կը լինեմ,
Միայն որդոցս սովից ազատեմ։
—Էհ եղբայր, ինչ ես դուս տալիս անհամ,
Մի՞թէ, երկու չէ՞ք, ես ո՞րիդ գործ տամ,
Ո՞վ էր քեզ տւում, որ ամուսնանաս,
Վերջն էլ որդոց մօտ սևերես մնաս։
Կամ թէ բարեկամ, ես փող չեմ կարում,
Որ միշտ վազում էր ու ինձ էր դիմում.
Գնա, սիրելիս, Աստուած քեզի հետ,
Խնդրում եմ մօտս չգաս այսուհետ։
Ու շատ քայլերով աղան հեռացաւ
Եւ իմ աչքերից իսպառ նա կորաւ։
Կիսամերկ մարդն էլ կանգնած իր տեղում,
Մի ինչ որ բան էր կարծես մտածում։
Արդեօք չէ՞ր տալու ինչու ծնւեցայ,
Աստուած իմ, Աստուած, հէ՞ր անտնացայ.
Եթէ այդ բանը յանցանք է եղել
Տէր, էլ ինչու ես մարդկանց ստեղծել

Փիառոն Ճլբեան

---

## ՖԵԼԻԷՏՕՆ

### ՍԻՐՈՂ ՍՐՏԵՐ

(Պօէմա, կարելի է և օպերայի համար)

Կարօի նոր սէրը

Կարօն շատ շուտ մոռացաւ Մարօին, որովհետև նրանց կողքին բնակւեց գիմնազիստկա Վարիա Բակլանը։ Աւել աւելորդ է, ի հարկէ նրանք ծանօթացան։ Բայց հետաքրքիրը այն է, թէ ինչպէս ծանօթացան։ Մի օր Կարօն կարդում էր բարձրաձայն իր թխած ոտանաւորը՝

Գիշերս լուռ է.
Նա ձայն չի հանում,
Երբոր հայեացքդ
Սիրտս է այրում։
Աչերս չռած,
Նայում եմ դէմքիդ.
Դուցէ հիմնաւոր
Ազդեմ քո սրտիդ։
Բայց ինչ կարող է
Հայեացքս անել,
Երբոր քո սիրտը
Լեռ քար է դարձել։
Ես ինչ կարող եմ
Խղճուկս անել,
Երբոր չը գիտեմ
Ռուսերէն խօսել։

Կարօն այս ոտանաւորը կրկնեց մի քանի անգամ, որ Վարիան ուշադրութեամբ լսի։ Վարիան տեսնելով, որ իրանց հարևանը հասարակ մարդ չէ, այլ բանաստեղծ է, թէպէտ ներսիսեան դպրոցի աշակերտ, մի նամակ ուղարկեց Կարօին, իր եօթը տարեկան քրոջ ձեռքով, հետևեալ բովանդակութեամբ՝

Ներիր ինձ, мой другъ,
Քեզ չեմ ճանաչում.
Քո նուրբ голосը
Շատ եմ հաւանում...
Какъ мнѣ писать,
Հայերէն չը գիտեմ,
Какъ тебѣ сказать...
Ես քեզ յարգում եմ...
Սիրելիս, խնդրեմ...
Եթէ դու ունես,
Լաւ կարդալու գիրք՝
Խնդրեմ ուղարկէս։

Կարօն խորատուզեց մտքերի ծովում, նա ունի շատ լաւ հայերէն գրքեր, ինչպէս՝ «Սօս և Վարդիթեր», «Արսէն Դիմաքսեան», «Հացի խնդիր», «Ոսկէ աքաղաղ», «Զահրումար» և այլն, բայց դրանք այս դէպքում պէտք չեն։ Ինչ վերաբերում է ռուսերէն գրքերին, նա մինչև անգամ ամօթ համարեց ցոյց տալ, որովհետև նրանք բոլորը Շերլոկ-Հօլմսի և Պինկերտօնի արկածներն էին։

Վերջը երկար մտածելուց յետոյ, մի այսպիսի պատասխան գրեց և ուղարկեց նամակաբեր աղջկայ ձեռքով։

Սատացայ նամակդ,
Սիրուն օրիորդ...
Ձեր նամակի մէջ
Գիրը առաջնորդ,
Իսկ լեզուն սոխակ.
Ինչպէս մի հրեշտակ,
Հոգին բնդունակ՝
Սիրոյ բառերին...
Պատասխան կը տամ
Իմ ջարդած լեզւով
Որ ինձ մօտ դուք գաք...
Այո, լաւ կանէք
Եւ ձեր ճաշակի
Գրքոյկը ընտրէք։

Զանցաւ շատ ժամանակ և օր. Վարիան անձամբ եկաւ Կարօի մօտ և հետևեալ խօսակցութիւնն ունեցան.

Վարիա — Բարև ձեզ պարոն...
Կարո՞ղ եմ ներս գալ...
Մի երկու րոպէ
Նեղութիւն ձեզ տալ։
Կարօ — Խնդրեմ, համեցէք,
Օրիորդ, ձեզ համար
Միշտ կայ իրաւունք
Ազատ, անպատճառ...
Վարիա (ողջունելով Կարօին)
Դեռ ծանօթանանք,
Ապա կը խօսենք...
Վարիա Բակլան...
Իսկ դուք՝ ինչպէ՞ս էք...
Կարօ — Պատիւ ունիմ ես

## ԳԻՒՂԱՑՒ ԱՂԱՉԱՆՔԸ

—Դոխտուր, դոխտուր, հէնց մուրադիդ հասնես, շուտ եկ, մեր տղան շատ ծանր հիւանդացել ա:

Բժիշկ.—(հանգիստ) Միք յուզւիլ իզուր տեղը, ես գիտեմ, դա հասարակ գլխացաւ է, կանցնի:

—Ախր դոխտուր ջան, ինչ հասարակ, աղի մազերն ու ատամները, Աստուած վկայ, ես ինքս տեսայ, կրաւաթի մօտ՝ տօլի վրայ թափուած էր:

—

«45 տարեկան օրիորդը»

—Ես շատ զարմանալի սիրտ ունիմ, եթէ մի որևէ տղամարդ ինձ հետ սիրոյ մէջ բացատրւի—հաւատացնում եմ ձեզ, դժւար թէ կարողանայի մերժել նորան:

—

«Դ ա ս ա ր ա ն ո ւ մ»

Ուսուցիչ.—Ինչու Մեծ Ովկիանոսին անւանում են, Խաղաղ Ովկիանոս:

Աշակերտ.—Որովհետև այնտեղ կանանց լողարաններ չկան:

—

—Արամ, դու լաւ գիտես աշխարհագրութիւնը:

—Այո, լաւ գիտեմ:

—Ուրեմն բացատրիր ինձ, ինչու երկրագունդը կլոր է:

—Որովհետև բոլոր գլօբուսները այդպէս են շինւած:

—

«Լաւ յատկութիւն»

—Գիտէ՞ք, Արշակ Սերգէիչ, օդապարիկները մի լաւ յատկութիւն ունին, և շատերին են ծառայութիւն մատուցանում:

—Այսինքն ինչպէս

—Ա՜յ, նստելով նորա մէջ, դու բարձրանում ես վերև և ազատւում պարտատէրների ձեռքից:

Խորէն-ժան-դը-բէկ.

* * *

Այս տարւայ հոկտեմբերի 3-ին, Օդեսայում յայտնի Куликово Поле հրապարակում կատարւում էր աշակերտական հանդէս՝ Պօլտաւայի յաղթութեան 100-ամեակի առթիւ:

Տօնակատարութեան ժամանակ, հրապարակին կից գտնւող մի մասնաւոր տան պատշգամբից, դիտելիս են լինում բարձրաստիճան անձինք և իմիջի այլոց, պարսից նախկին շահ Մահմեդ Ալին և Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն:

Հանդիսի ժամանակ, աշակերտ—աշակերտուհիները, թւով մօտ 30 հազար, շարք-շարք հանդիսաւոր կերպով (церемоніальнымъ маршемъ) անցնում են Պետրոս Մեծի ժամանակաւոր արձանի առաջ: Այդ տեսարանը շատ է դուր գալիս ex-շահին, և նա երբ հանդէսը վերջանում է, գոհ սրտով դիմում է պ. հոգաբարձուին

—Ես երևակայում եմ արդէն, թէ ինչպիսի զօրաբանակ կարելի է կազմել այդ երիտասարդութիւնից, և թէ ինչպիսի զինւորներ է ունենալու ապագայում ռուսաց պետութիւնը,—մոռանալով միանգամայն, որ այդ՝ հաւանած «զօրաբանակի» 50% կազմում էին քնքոյշ աշակերտուհիները:

Լ.

«Բժշկի որդին»

Ուսուցիչը.—Դուք դարձեալ չգիտէք ձեր դասը. ես ստիպւած կլինեմ հրաւիրել ձեր հօրը...

Աշակերտ.—Դա ձեզ վերայ երեք րուբլի կը նստի, պ. ուսուցիչ:

—

«Կարճատև ուրախութիւն»

Հայրը.—Ինչպիսի ուրախութիւն էր, երբ իմ հինգ տարեկան որդին, ինձ համար գարեջուր էր բերում. իսկ հիմայ, երբ նա արդէն տասը տարեկան է, այդ բանը ինձ այնքան էլ չէ ուրախացնում, որովհետև այժմ երբ գարեջուրը բերելիս է լինում, կէսը ճանապարհին ինքն է խմում:

---

Ծանօթանալու,
Իմ ազգանունս
Կարօ Թզուկեան...
Այո, ինձանից
Գիրք էք պահանջել,
Ռուսերէն գրքեր
Ես չեմ կարդացել...
Ախ, ինչպէս անեմ
Որ ձեր ուզածը,
Անշուշտ անպատճառ
Ձեր կամեցածը...
Հ՞ը...

Վարիա. Не безпокойтесь!
Եթէ չունէք գիրք...
Եկէք դուք մեզ մօտ
Ուտենք մի քիչ միրգ...

Կարօ. Ախ ինչ էք ասում...
Ես շատ ուրախ եմ,
Որ ինձ մօտ եկաք,
Շատ շնորհակալ եմ...

Վարիա. Ոչ, ոչ, դու կը գաս.
Մաման մեզ համար
Խնձոր կը բերի...
Արի անպատճառ...

Եւ թռչկոտելով տուն է գնում: Կարօն մտածում է... գնալ թէ չը գնալ... Վերջը վճռում է գնալ: Իսկոյնևեթ մաքրեց իր հագուստը, տասնեհինգ անգամ հայելու առաջ գլուխը սանրեց, մի տաս անգամ ձեռները լւաց, կապեց երեք վերշոկ լայնութեամբ գօտին և վազեց Վարիենց տուն:

Դրան մէջ հանդիպեց Վարիան ու բռնելով Կարօի ձեռքից, ներս տարաւ սենեակը, իր մօր հետ ծանօթացնելու:

Վարիա. Մայրիկ, տեսնում ես
Այս բարի տղան,
Կամենում է ինձ
«Գրականից» օգնել...
Թոյլ տուր սրան մայրիկ
Մեր տուն յաճախել...
Ամէն երեկոյ
Մեր մօտը լինել:
Մայրիկ, հայերէն
Սա շատ լաւ գիտէ:

Կարօն բոլորովին չէր սպասում այդպիսի ընդունելութեան, սակայն ինքը իրեն չը կորցրեց և աւելացրեց օրիորդի ասածներին՝

Այո, հայերէն
Ես շատ լաւ գիտեմ,
Րաֆֆի, Պատկանեան
Ես կարդացել եմ:
Նոր գրականութիւն,
Հին գրականութիւն.
Մեծ Խորենացուն,
Ղազար Փարպեցուն,
Անգիր եմ արել:
Եթէ ուզում էք
Կարող եմ օգնել
Եւ ձեր աղջկան:

Մայրիկը: Ես շատ ուրախ եմ
Սիրելի որդեակ,
Կարող ես լինել
Դու մեր տան զաւակ.
Կը գաս դու մեր տուն
Հանգիստ դաս կը տաս,
Եւ Ալիշանից
Բան իմաց կը տաս:
Ի հարկէ, որդեակ,
Կեղտոտ գործերը
Ոչ ոք չի սիրում,
Ոչ ոք չի յարգում,
Ես էլ շատերի պէս
Այդպէս եմ կարծում:
Ես տեսնում եմ որ՝
Դու լաւ տղայ ես,
Ցիմար բաներից
Միշտ հեռու կենես:
Եթէ իմանամ,
Որ շատերի պէս
Ցիմար բաները
Մտքումդ ունես՝
Իմացած եղիր,
Որ քեզ մի վայրկեան
Մեր տուն չեմ թողնի,
Պարոն Թզուկեան:

Եւ այդ ժամանակ Վարիան իջեցրեց մի ամաս շաղանակ, ու Կարօն և Վարիան միասին կերան:

Ահա այսպէս ծանօթացաւ Կարօն Վարիայի հետ:

Սրանից յետոյ, ամէն օր Կարօն գնում էր Վարիենց տուն, իբրև թէ Վարիայի հետ գրականութեամբ պարապելու: Այո, նա պարապում էր... բայց ոչ գրականութեամբ, այլ սիրաբանութեամբ: Նա մոռացութեան տւեց Աղասուն և Մարօին: Բայց Աղասին դեռ պատրաստւում է «ցոյց տալու»: (Կր շարունակւի)

Լոռեցի № 30-րդ:

## № 4711 КРАСКА для ВОЛОСЪ

изъ орѣховаго экстракта
ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿ

Ընկույզի քաղուածքից. Կարճ ժամանակում տալիս է մազերին ուզած գոյնը՝ ամենաբաց շեկագոյնից մինչև սև. Թէկուզ մազերը ալեխառն կամ խայտաճաղ լինեն, այնպէս որ կարելի է նորոգել նրանց բնական գոյնը։ Ինչքան յաճախ գործադրւի այս ներկը, այնքան կը մուգանան մազերը, № 4711 մազերի համար ներկը, ընկուզի հիւթից՝ արժէ որ գերադասւի մազերին գոյն տւող բոլոր միջոցներից, որովհետև նա չէ պարունակում իր մէջ ոչ մի վնասակար նիւթ.

ԳՈՅՆԵՐՆ ԵՆ

սև, դարչինագոյն, շագանակագոյն և բաց.

Գինը փոքր սրւակի 1 ր. 20 կ.
» մեծ » 2 ր. — կ.

Ծախւում է բոլոր լաւագոյն խանութներում.

**ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ**

Քէօլն Ռայնի վրայ, բաժանմ. Ռիգայում. Նորին Կայսերական Մեծութեան Դատի մատակարար.

Ферд. Мюльгенсъ
Кельнъ н/Рейнѣ отд. въ Ригѣ

6—2



# ՓԱՐՈՍ

## ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդւածներ, գրած յատկապէս օրացոյցի համար։ Ունի հայերիս մէջ դեռ լոյս չտեսած արժէքաւոր յաւելւած «ԹՈՒՐՔԱՀԱՅՑ ԳՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղւած են քսանևհինգ հայ գրագէտների պատկերներ իրենց համառօտ կենսագրական և գրական գոյնը որոշող յօդւածներով. Վեհ. Կաթուղիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։

### ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

**Մասն I.** 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պատկի տարրողութեան Թղլատրելի օրերը, 4) Օրացոյց 1910ի թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Ոք օրը խանութները պիտի փակել.
**Մասն II.** 7) Զեմստվօ, 8) Օրէնսդրներ, 9) Զինւորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինւորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինւորական բիւջէները. 11) **Քաղաքական.** Մերձաւոր արևելքի վերածն.-Վերքածն, 12) **Աշխարհաբանական.** Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բևեռի բացումը, 14) Աստղագիտութիւն ա) Տարւայ յարատևութիւնը, բ) **Տիեզերք**, Տարրական հասկացողութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական ալիւսակ, 15) **Գիտական նորութիւն** ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներն են, գ) Երազի հայերանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) **Առողջապահական** ա) Մենք շատ ենք ուտում, բ) Մննդի նորմալ բաժինը 24 ժամւայ համար. գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու նշանները, զ) Հոգւատը. 17) **Գիւղատնտեսական.** Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան 18) **Գիտական.** Ջուրը. Ե. Եկոնեան. 19) **Լեզւագիտական** ա) Էսպերանտօ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարբեր. Մեռելների այրումը. 20) **Ճէլեան.** Կապը կորած կինը, Նար-Դոս 21) **Գրաւոր գրականութ** ա) Ուսումը պարգուլում Դ. Աղայեան բ) Ազատ մանկան տունը Կ. Վէնցելի, 23) **Կենսագրական** ա) Մատթէոս II, կաթուղիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 24) **Առևտրա-Արդիւնաբերական** ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ. գ) Գիւղական բանկեր, Ս. Ղալաչեան դ) Հարկեր և տուրքեր, ե) Պարտամուրհակի հարկեր, զ) Նոտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ի) Կանխավճարի մասին, լ) Նամակ 25) **Փոստ.** (Կանոնագր. նորագոյն հրատարակ. Այս տարի վերցրած է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն տեղեկութեամբ և ցուցակներով. 26) **Անեկդոտ**, 27) **Ջւարճալիք** ա) Ջւարճալի խնդիրներ. բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տանտիկնոջ անյաջող փորձ (ալրանի խաղեր). 28) Ծովը, Վ. Փափազեան. 29) **Սառախտիկս** 30) Արհեստակցական.

Յաւելւած. **ԹՈՒՐՔԱՀԱՅՑ-ԳՐՈՂՆԵՐ**, գեղեցիկ Թղթի վրայ, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդւածներով.

### ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Օտար քաղաքացիներին 20% զեղչ և փոստի ծախսը մեզ վրայ.
Դիմել Тифлисъ, Типографія „Эпоха" В. Варданяну.

0—3



## Թիֆլիս քաղաքի կենտրոնում

Վարենցովյան փող. սեփ. տուն № 5.

ՆՈՐ ԲԱՑՒԱԾ

# ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿԻ ՆՈՄԵՐՆԵՐ

Սենեակները շքեղ կահաւորւած, փառնա և դուշ ամենամեծ յարմարութիւն բնակիչների համար.

Կին և տղամարդ ծառաները ՔԱՂԱՔԱՎԱՐԻ. ○ ○ ○ ○

○ ○ ○ ○ Նոմերները 1 րուբլուց սկսած և աւել.

Ամսականով կեցողներին առանձին մեծ զեղչ։

☞ ՋՐԻ ՎԱՌԵԼԻՔ ☜

Գոլովինսկի փողոցից 2-դ տունը, բաղդօնի փոշտի դիմաց, որի ներքին յարկում տեղաւորւած է Վլադիկավկազի, Թեյլսի և Սղնախի արակի գրասենեակը.

Տան սեփականատէր Ալէքսանդր Մ. Յարութիւնով. 5—1



Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



## ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Գոլովինեան փող. տուն Սոնդուկեանի, վրաց սեմինարիայի դիմաց)
Ամեն օր ստացւում է սեփական ձկնարդիւնաբերանից Թարմ ձուկ
ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԹ
Ունինք մեծ քանակութեամբ Թարթի դօշ, Դօնի և տեղական բալըկ, ճիպա, ցալձւալա, եանի և այլն.
ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԿԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ
Կովկասեան և արտասահմանեան ձկնային կոնսերվներ. Գները ամենաչափաւոր.
20—12

Մանուֆակտուրային վաճառք

МАНУФАКТУРН. магазинъ

# ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ

И. Г. КАЧКАЧЕВА
Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սոլոլակսկայա փողոցի վրայ, «Պրոզօրովի ընկ.» խանութի շարքում, Ազովո-Դոնեան բանկի ներքեւում, (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացուած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ. Ստացուած են մեծ քանակութեամբ սէզօնի նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր գոյնզգոյն հիմնարկութիւնների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ՝

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Բրդէ շալեր, պլիւշի, բայի, պիկէ, ատլասի և Քաշմիրի վերմակներ.

ՔԱԹԱՆԷ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՓՌՈՑԱԿԵՂԷՆ

ամենալաւ ֆաբրիկաների, գորգերի տեսակ, պլիւշի սփռոցներ, թաւիշ, պլիւշ և մանչեստր. Բազմաթիւ գոյներ. Սատին, բատիստ, բումազէյ, նուփուզէ և չիթ. Բամբակէ գործուածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ. Բոյկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ. Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով.

ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ

ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

—o— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —o— 20—5

ՇՏԱՊԵՑԷՔ ԳՆԵԼ

## Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆԻ

Մանուֆակտուրի վաճառատունը Թամամշեանի քարւանսարայում №№ 19, 22, և 23 առեւտուրը վերջացնելու պատճառով

ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ

Ծախւում է եղած բոլոր ապրանքը—ամէն տեսակ մետաքսի, բրդի մահուդեղէնի, քաթանի, բամբակի և կանացիութեան կտորներ.

ՕԳՏՒԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ

10—7

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԿՈՄՊԼԵԿՏՆԵՐ
ՓԱՌԱԿԱԶՄ

| | |
|---|---|
| 1906 թ. արժէ . . . . . . . | 5 րուբլի |
| 1907 թ. . . . . . . . . . . | 7 ր. — |
| 1908 թ. . . . . . . . . . . | 7 ր. — |




13—6

МАГАЗИНЪ
Композиція
Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8



Громадная экономія шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
Воротниковъ, манишекъ и манжетъ.
Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ
передѣлка въ любой фасонъ безплатно
М. А. КАЛТАГЯНЦА 30—20

1910 թւի համար
ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## „ԳԻՒՂԱՏՆՏԵՍ“

Պատկերազարդ շաբաթաթերթի (Բ. տարի

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն. Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն. Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն. Այգեգործութիւն և գինեգործութիւն. Ցանուկ բոյսերի մշակութիւն. Մեղւաբուծութիւն և շերամապահութիւն. Բանջարաբուծութիւն. Թռչնապահութիւն. Կոօպերացիա և ապառողական ընկերութիւններ. Գիւղատնտեսական նորութիւններ. Գիւղատնտեսական կեանք. Գրախօսութիւն. Աթղթակցութիւններ. Տնայնագործութիւն և տնարարութիւն. Հարց և պատասխաններ. Պատարկը և յայտարարութիւններ.

Առաջակայ 1910 թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ.

«Գիւղատնտեսը» 1910 թւի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նւէր՝

ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը.

| Ռուսաստանում | | Արտասահմանում | |
|---|---|---|---|
| Տարին . . . | 3 րուբլի | Տարին . | 4 րուբլի (12 ֆրանկ) |
| Կէս տարին . . | 2 րուբլի | Կէս տարին | 2 ր. 50 կ. (7 ֆրանկ) |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція «Гюхатнтесъ». 3—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 Թ.

# ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Դրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ԼՐԱԳԻՐ

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ԱՌԺԱՄԱՆԱԿ

ooo ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ooo

Չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը

Մօտիկ աշխատակցութեամբ Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ, ԼԷՕԻ և ՆԱՐ-ԴՈՍԻ:
«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաբանական շաբաթաթերթը պակաս վճարով:

ԲԱԺՆԵՎՃԱՐՆ Է

| ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Առանձին) | | ԽԱԹԱԲԱԼԱՆ (Առանձին) | |
|---|---|---|---|
| Տարեկան. | 7 — | Տարեկ. Թիֆ. 4 ր. դուրսը | 5 ր.: |
| Կէս տարին. | 4 — — | Կէս տ. » 2 ր. » | 3 ր.: |
| Երեք ամիսը. | 2 — 25 | 3 ամ. Թիֆ. և դուրսը. 1 ր. | 50կ.: |
| Մէկ ամիսը | — — 75 | Մէկ ամիսը | — — 50կ.: |

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ

(Միասին)

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան. | 10 — — | Երեք ամիսը. | 3—50 |
| Կէս տարին. | 6 — — | Մէկ ամիսը. | 1—20 |


— Կինս ինձ դաւաճանեց...
— Եւ դա քեզ ցաւ է պատճառում:
— Ոչ, բայց հասկացիր—նա ինձ օգնում էր պարտքերս վճարելիս.

—

Նա:—Ես ձեզ համար զոհեցի ամենքին:
Նէ:—Եւ պատրաստ էք ինձ էլ զոհել ամեն պատահածի համար...


АГЕНТЪ

По сбору объявленій для мѣстныхъ и иногород. газетъ и журналовъ

М. А. Гажонія

Տեղական և այլ քաղաքների լրագրների համար յայտարարութիւններ հաւաքող

ԱԳԵՆՏ

Ընդունում է ձեռնտու պայմաններով ամեն տեսակ յայտարարութիւններ, թէ տեղական և թէ ուրիշ քաղաքների լրագրների համար: Մասնաւորութեամբ օգնել ցանկացողներին, խնդրում է դիմել հետեւեալ հասցէով: Тифлисъ, Великокняжеская, 4.
Телефонъ № 216

1—1


— Ա՜խ, Ալէքսանդր Սերգէյեւիչ, ինչպէս ես սիրելիս, ծեր ես, այ մարդ, չես երեւում.
— Գլուխս քիչ խառն է, Իւան Նիկիտիչ.
— Հա՛, այ մարդ, մտացդ ասեմ, երեկ կնոջդ տեսայ բուլուարում, մի «երա» շլեապայ գլխին, чортъ вазми, ինչե՞ր չկար գլխին, գութանից բռնած մինչեւ վերջին ցախաւելը շլեապայի վերայ կար, համարեա թէ գիւղատնտեսութեան բոլոր գործիքներն էլ կար...
— Այո, ճշմարիտ է, կինս այդ շլեապան գնել է նրա համար, որովհետեւ մտադիր է գիւղատնտեսութիւն սովորել և Ալէք. Քալանթարի հետ միասին, Լօռի գնալ էքսկուրսիայի:


ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ!!

Պուշկինեան պողոտա № 4—6

ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Յատուկ գերմանական ֆիրմաների.—Տղամարդկանց և կանանց զանազան կոճակների, մետաքսի և բրդի շերիտների, բամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձեռնոցներ, ժապաւէններ, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան սաստաններ, փունջեր գոյթաններ: Այստեղ էլ ընդունւում են պատուէրներ զանազան կտորներից շինում կոճակների, նոյնպէս ամեն տեսակ փայլեցման ապրանքների. մշտապէս ստացւում են սեզոնի նորութիւններ: Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզուել խանութիս մէջ:
Ապրանքների գները նշանակուած են ամենաէժան:

10—7 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ



Օգտուեցէք դէպքից

ՎԵՐՋԱՑՆՈՒՄ ԵՆՔ

Ա. Տէրտէրեանի կօշկեղէնի վաճառատունը

որ գտնւում է Միջի փողոցում, Ազելխանեանի վաճառատան կից, № 6 տանը, առեւտուրը ընդմիշտ վերջացնելու պատճառով Ս. Տ. նոյեմբերի 23-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը. նշանակել եմ մագազինումս եղած բոլոր ապրանքների ՎԵՐՋՆԱԿԱՆ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ. տղամարդկանց, կանանց և երեխաների կօշիկներ՝ 25%—50% զեղջ գործարանի գնից պակաս:
Գները առանց սակարկելու. խնդրում եմ անձամբ համոզուել:

1—1 Յարգանքով՝ Ա. ՏԷՐՏԷՐԵԱՆՑ

վերջնական էժան վաճառք

Օգտուեցէք չճարուած դէպքից


— Պ. կառավարիչ, խնդրում եմ մի գործ տաք:
— Ձեզ գործ չկայ:
— Ինչո՞ւ...
— Որովհետեւ, երբ որ ընկերդ իմ հասցէին խօսում է, ինձ չես ասում:
— Բայց ես ընդունակ չեմ «լրտես» լինելու...
— Ընդունակ չես, գնա և քաղցած մեռիր:
— Իսկ ինչ օգուտ ձեզ դորանից, որ լրտեսեմ:
— Այն, որ նրա «շնորհակօթին» կտամ և դուրս կը վռնդեմ, իսկ տեղը իմ գիւղացին կը դնեմ:

## Ա Լ Է Ք Ս Ա Ն Դ Ր   Խ Ա Տ Ի Ս Ե Ա Ն Ը

### ՆՈՐ ԱՈՒԴԻՏՕՐԻԱՆԵՐ Է ՓՆՏՐՈՒՄ ԴԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ




—Ալէքսանդր Իվանիչ, ո՞ւր էք այդպէս շտապում, այստեղ քաղաքային գործեր կան կարգադրելու:
—Սարսափ, Միշա ջան, աէրօպլանը պատրաստ է, բարձրանում վերև, եթերումն էլ տանեմ. գուցէ տեղեր կան, որ պիտի խօսեմ «Անաթէմի», «Անֆիսայի», «Կապոյտ Թռչունի», «քաղաքային ինքնավարութեան», «տուբերկուլեօզի» և այլ բաների մասին:



ՄԵՐ ՆՈՐ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

Լ. ՄԱՆԻԷԼԵԱՆԸ

Հեղինակ սիմւօլիկ «Շեղւածներ» պիեսի

—Տիկին, ես շատ ցաւում եմ, որ իմ պիեսում ձեզ տեղ չտւի:
—Դուք տղամարդիկդ միշտ այդպէս էք, խօսում էք կանանց հաւասարութեան և այլ լաւ բաների մասին, իսկ այդ տեսակ տեղեր, միայն դուք էք գնում. եթէ «մէկի» և «միւսի» հետ «ես» էլ լինէի, կարծեմ պիեսան այստեղ ոչինչ չէր կորցնի և բնական էլ կը լինէր:







Բ Ա Ց Ի Ա Ծ  Է  Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

**1910 թ.**

# 5 ԽԱԹԱԲԱԼԱ 5

Տ Ա Ր Ի — Տ Ա Ր Ի

## Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունատիպ պատկերազարդ հայ շաբաթաթերթն է:
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական եւ եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով։

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն շարունակւում է նոյն ուղղութեամբ, նոյն արտիստների եւ գրագէտ երգիծաբաններին մասնակցութեամբ, ինչպէս եւ անցեալ տարիները:

**ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ**

**Գ ր ի չ ն ո ւ  Թ ա ն ա ք ը,  Ն ե ր կ ն ո ւ  Հ ա ն ա ք ը**

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՓԱԿԱՍ ՎՃԱՐՈՎ

## „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդյունաբերական լրագիրը, որն առայժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ, կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ, իսկ ապագայում ամեն օր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
Ա Ռ Ա Ն Ձ Ի Ն

| | |
|---|---|
| Տարեկան ....... | 5 րուբլի |
| Կէս տարին ..... | 3 ր. |
| Երեք ամիսը ...., | 1 ր. 50կ. |
| Թիֆլիզում տարեկան | 4 րուբլի |

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
Ա Ռ Ա Ն Ձ Ի Ն

| | |
|---|---|
| Տարեկան ....... | 7 րուբլի |
| Կէս տարին ...... | 4 ր. » » |
| Երեք ամիսը ...... | 2 ր. 25 կ. |
| Ամիսը ...... | 75 կ. |

**«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԵՒ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ» ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ**

| | |
|---|---|
| Տարեկան ......... | 10 րուբլի |
| Կէս տարին ....... | 6 ր. |
| Երեք ամիսը ...... | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը ...... | 1 ր. 20 կ. |

Հասցէն Тифлисъ. Редакція „Хатабала“. Հեռագրով Тифлисъ „Хатабала“
Արտասահմանից Tiflis Caucas Redaction «Khatabala»